

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 44/6

3 նոյեմբերի 2015 թ.

Քննարկվեց «Արծն» ՍՊԸ 05.10.2015 թ-ի դիմում-գանգատը ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ 01.10.2015 թ-ի թիվ 5102146 ակտի դեմ:

«Արծն» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

«Արծն» ՍՊԸ-ին տուգանել են համաձայն 846-Ն որոշման 2-րդ հավելվածի 40-րդ կետի և 5-րդ ենթակետի՝ ակտում ավելացնելով ոչ լիարժեք արտահայտությունը, որը առկա չէ վերոնշյալ որոշման մեջ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընկերությունը չի խախտել հսկիչ-դրամարկղային մեքենայի շահագործման կանոնները, այն է՝ տրամադրված կտրոնը բավարարել է նույն որոշման 1-ին հավելվածի 13-րդ կետով նախատեսված պահանջներին, ընկերությունը խնդրում է չեղյալ համարել 01.10.2015թ.-ի թիվ 5102146 ակտը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ֆինանսների նախարարի 08.09.2015 թ-ի թիվ 5102146 հանձնարարագրի համաձայն «Արծն» ՍՊԸ-ում իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ 01.10.2015 թ-ի թիվ 5102146 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 300.000 դրամ:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ ավագ հարկային տեսուչներ Սիևոդ Օհանյանի և Հայկ Կարապետյանի կողմից 11.09.2015 թ-ին ժամը 19:02-ին ք.Երևան, Տիգրամ Մեծի 71 հասցեում գտնվող խանութ-սրահից կատարվել է գնում 800 դրամի չափով՝ 1 հատ լամպչկա 340 դրամ, 1 հատ բլեսկ 210 դրամ, 1 հատ օճառ 130 դրամ, 1 հատ օճառ 130 դրամ, որի դիմաց կանխիկ վճարված գումարի դիմաց տրամադրվել է ՀԴՄ կտրոն: Սակայն, տրամադրված ՀԴՄ կտրոնի վրա նշված տեղեկություններում բացակայում էին ապրանքը բնութագրող հատկանիշները:

Ստուգմամբ պարզվել է, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից խախտվել են ՀՀ կառավարության 01.08.2013 թ-ի թիվ 846-Ն որոշմամբ հաստատված Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման կարգի հավելված 2-ի 17-րդ կետի պահանջները, ինչը նույն կարգի 40-րդ կետի 5-րդ (բ) ենթակետի համաձայն համարվում է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտում: Արդյունքում կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված տուգանքը՝ գումարով 300.000 դրամի չափով:

Քննարկվող դեպքում ստուգումն իրականացնող անձինք, ուսումնասիրելով ստուգման ընթացքում գնված ապրանքների դիմաց տրամադրված ՀԴՄ կտրոնում արտացոլված տեղեկությունները, եկել են եզրահանգման, որ դրանում բացակայում է ապրանքը բնութագրող հատկանիշները: Մասնավորապես, գնվել է 2 հատ տարբեր

տեսակի օճառ՝ յուրաքանչյուրը 130 դրամ, և այդ օճառների տարբեր լինելու (տարբեր անվանումներ) վերաբերյալ տվյալների բացակայությունը, դիտվել է որպես ՀՀ կառավարության 01.08.2013 թ-ի N 846-Ն որոշմամբ հաստատված հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման կարգի խախտում:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել հետևյալը.

ՀՀ կառավարության 01.08.2013 թ-ի N 846-Ն որոշմամբ հաստատված հսկիչ-դրամարկղային մեքենաներին ներկայացվող տեխնիկական պահանջների (N 1 հավելված) 13-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն. «ՀԴՄ-ի կտրոնի վրա պետք է տպագրված լինի հետևյալ տեղեկատվությունը (տվյալները)՝

...

9) ապրանքի (ծառայության) անվանումը.»:

Իր հերթին, ՀՀ կառավարության 01.08.2013 թ-ի N 846-Ն որոշմամբ հաստատված հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման կարգի (N 2 հավելված) 40-րդ կետի 1-ին և 5-րդ ենթակետերի համաձայն. «Օրենքով սահմանված պատասխանատվություն կիրառելու առումով՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտում է դիտվում՝

1) որոշման N 1 հավելվածով սահմանված՝ ՀԴՄ կտրոնի վրա տպագրման ենթակա որևէ տեղեկատվության (տվյալի) բացակայությունը (բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի) կամ անընթեռնելիությունը (անգն աչքով կտրոնի վրա արտացոլված տվյալներն ընթերցելու անհնարինությունը).

...

5) ՀԴՄ-ի կտրոնի վրա գնված ապրանքից կամ ստացված ծառայությունից տարբերվող ապրանքի կամ ծառայության անվանման տպագրումը»:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով ստուգման ընթացքում գնված ապրանքների դիմաց տրամադրված ՀԴՄ կտրոնը, եկավ եզրակացության, որ այն պարունակում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված բոլոր անհրաժեշտ վավերապայմանները: Մասնավորապես նշվեց, որ ՀԴՄ կտրոնում իրականում առկա են գնված ապրանքների անվանումների մասին նշումները, քանի որ քննարկվող դեպքում կտրոնի վրա տպագրված է երկու անգամ հանդիպող «օճառ» բառը: Այսինքն, ապրանքի անվանումը հենց «օճառ» բառն է: Բացի այդ, ստուգմամբ ՀԴՄ-ի կտրոնի վրա գնված ապրանքներից տարբերվող ապրանքի անվանման տպագրման փաստ չի արձանագրվել:

Վերոգրյալից հետևում է, որ Ակտի 1-ին կետում հիշատակված ՀԴՄ-ի կտրոնի վրա տպագրված տեղեկատվությունը բավարարում է ՀՀ կառավարության 01.08.2013 թ-ի N 846-Ն որոշման N 1 հավելվածի 13-րդ կետի 9-րդ ենթակետով, ինչպես նաև N 2 հավելվածի 40-րդ կետի 5-րդ ենթակետով նախատեսված պահանջներին:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ 01.10.2015 թ-ի թիվ 5102146 ակտը:

Հանձնաժողովի նախագահ՝


Վ.Մ.ԻՐՈՒՄՅԱՆ

